

չհալի գրագետին հոգիին դողդոջուն լարերուն, զանոնք թրթաացնելու համար: Բանաստեղծը, արդարեւ, ջերմե-  
ռանդ երկրպագու մըն է բնութեան սխրալի դիպութեան-  
ցը, զորս կը տարփողէ, կը փառաբանէ, կ'աստուածացնէ.  
իր հոգին տրտմութիւնը կը պտտցնէ Մաստառի ծաղկալից  
կողերուն վրայ, իր սէրերուն յագուրդը կը փնտոէ բնութե-  
ան զովացուցիչ ակերուն մէջ. մենաւոր ծառին երանի կու-  
տայ, վասն զի անիկա իր խորհուրդներուն հետ մի'ս մինակ  
է, զերծ մախանքէ, կիրքէ, ատելութենէ: Իր բաղձանքները  
կեանքի գետնաքարշ նիւթին չեն ձգտիր. այգեկութի օրե-  
րուն կ'ուզէ ճերմակ վրանն ըլլալ եւ նստիլ այգիին մէջ,  
ճերմակ ու կարմիր խաղողներուն մէջ. կ'ուզէ փեսան ըլլալ  
դաշտային ճոխութեան յետին գեղեցիկներուն, երկինքէն  
անցնող թափառական կռունկին բարձրաթիչ երգը ըլլալ  
եւ գիւղին մշտահոս աղբիւրը, որպէս զի բոլոր սափորնե-  
րը իրմէ լեցուին: Ազատութեան տեսչացող իր հոգին՝ եղ-  
նիկին հետ սարէ սար կը սլանայ, անկոխ բարձրութեանց  
վրայ կը թռչտի, երջանկութեան խորհրդանշանը կը տեսնէ  
անոր քերթուածային յօրինուածութեանը մէջ:

Իր արձակ բանաստեղծութիւնները, գրականօրէն,  
նուազ մեծ արժէք չեն ներկայացներ քան իր պատմուածք-  
ները: Անկեղծութիւնը, ճշտութիւնը, երանգներու ճոխու-  
թիւնը, պատկերներու առատութիւնը, զգացմանց յորդու-  
թիւնը գլխաւոր յատկանիշներն են այդ քերթուածներուն:  
Ատոնց մէջ ես կը տեսնեմ Զարդարեանի իմաստասի-  
րութիւնն ալ, վասն զի բանաստեղծութիւնը, իր խորքին  
մէջ, իմաստասիրութիւն մը կը բովանդակէ միշտ: Անիկա  
ձանձրացած մըն է ընկերային գոեհիկ ու սնամէջ կարգ ու  
սարգերեն, նողկանքով լեցուած է բոլոր վատութիւննե-  
րուն դէմ, բոլոր անիրաւութիւններուն դէմ. բնութեան կը  
դիմէ, որ միակ անխարդախն է ու անապականը: Յոռետե՛ս  
մըն է ինք. գուցէ. կը յորդորէ եղնիկը փախչիլ բնակութիւն-  
ներէ, վազել դէպ ի բարձրը, դէպ ի ազատը. կարօտը կը  
քաշէ մենաւոր ծառին որ զերծ է ամէն գձծութիւններէ եւ  
դառնութիւններէ: